

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԵԼԻՔՅԱՆ

Հովհաննես Հովհաննիսյանը խորապես գիտակցում էր թարգմանական գրականության կարևոր գերը հայ գրականության զարգացման գործում: Նրա դրական ճաշակը կազմավորվեց դեռևս լազարյան ճեմարանում: 1879 թ. բանաստեղծն իր կարողությունները փորձում է թարգմանությունների բնագավառում: Պահպանված բազմաթիվ սևագրությունները հավաստում են Հովհաննիսյանի թարգմանական հետաքրքրությունները: Նա 16 տարեկան հասակում թարգմանել է Ա. Միցկևիչի «Ծառ շերմ արցունք թափեցի» բանաստեղծությունը, որտեղ արտացոլված են լեհ գրողի խոհերը, նրա հոգու վառ պատկերը: Բանաստեղծությունն անմշակ է, սակայն հետաքրքիր է որպես թարգմանական փորձ: Հետագայում այդ թարգմանությունը Հովհաննիսյանը տպագրել է իր անդրանիկ ժողովածուում¹:

Հովհաննիսյանի թարգմանական գործունեության ցայտուն ապացույցն է 1881 թ. Գյոթեի «Ձկնորս» բանաստեղծության թարգմանությունը, որը Հովհաննիսյանի կատարած առաջին տպագիր թարգմանությունը լինելով, արժանացել է դրական հասարակայնության ուշադրությանը²:

1884 թ. ձմռանը, Մոսկվայի համալսարանի մի խումբ հայ ուսանողների ջանքերով, կազմակերպվում է Մոսկվայի հայ ուսանողների գրական ընկերությունը, որի ակտիվ մասնակիցներից էր Հովհաննիսյանը: Գրական ընկերությունը 1884—1886 թթ. հայկական դպրոցների աշակերտների համար հրատարակում է չորս գրքույկ, որոնցում (բացառությամբ երկրորդի) տպագրվել են ռուս և օտար հեղինակներից թարգմանված գործեր:

1884 թ. սկզբներին, Մոսկվայում «Զորս առակ» խորագրով լույս է տեսնում ընկերության առաջին գրքույկը, որտեղ զետեղված են Հովհաննիսյանի «Փինաչի» ժողովրդական զրույցը, Ֆրանսիացի գրող Լաբուի «Մոմոան կատու», «Կապույտ կրակում» պատմվածքները և Շարլ Պերրոյի «Կախարդ կանաչ» հեքիաթը: Գրքույկը տպագրվել է Հովհաննիսյանի հետևյալ դիտողությամբ. «Այս փոքրիկ գրքույկի հրատարակությամբ մենք կամենցանք երևան հանել ՄՀՈՒԳԸ³. Հույս ունենք, որ այսուհետև մեր ԳԸ կարող պիտի լինի ավելի մեծ խնամքով ու հոգատարությամբ լույս ածել հետագա տետրակները, որ նվիրում ենք հայ ընթերցող մանուկներին»:

¹ Հովհաննես Հովհաննիսյան, Բանաստեղծություններ, Մ., 1887, էջ 10:

² «Արարատ». 1884, № 3, էջ 133:

³ ՄՀՈՒԳԸ—Մոսկվայի հայ ուսանողների գրական ընկերությունը:

Ընկերության երրորդ գրքույկում (1885 թ.) տպագրվել է Լ. Տոլստոյի «Ինչո՞ւ եմ ապրում մարդիկ» պատմվածքի փոխադրությունը, շտրորդում (1886 թ.)՝ անգլիացի գրող Ուլդի «Հնդու աքաղաղ» պատմվածքի թարգմանությունը:

Լծվելով գրական ընկերության աշխատանքներին, Հովհաննիսյանը ձեռք բերեց թարգմանչի վարպետություն, նա իր ուսումնառության շրջանում ոչ միայն կարդում, ուսումնասիրում էր եվրոպական և ռուսական գրողներին, այլև թարգմանում էր նրանց գործերը և ընդլայնում իր ինքնուրույն ստեղծագործությունների թեմատիկան, մշակում իր բանաստեղծական ձիրքը: 80-ական թվականներին ձևավորվեցին Հովհաննիսյանի ստեղծագործական սկզբունքները, որոնց արտահայտությունը եղավ 1887 թ. օգոստոսին լույս տեսած գրական ընկերության հինգերորդ գրքույկը՝ Հովհաննիսյանի «Բանաստեղծությունների» առաջին ժողովածուն, ուր ինքնուրույն ստեղծագործությունների հետ մեկտեղ տպագրվեցին նաև մի շարք թարգմանություններ: Նրա առաջին իսկ բանաստեղծություններում նկատելի է գրողի կապը ռուսական ռեալիզմի ականավոր ներկայացուցիչների հետ և այդ գրականության լավագույն ավանդները հայ գրականության մեջ զարգացնելու միտումը: Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայ իրականության մեջ Ռ. Պատկանյանի քնարը դեռևս իշխող էր գրական նոր սերնդի համար, սակայն Հովհաննիսյանին վիճակված էր դառնալու հասարակական շարժման նոր շրջափուլի արտահայտիչը, հայ պոեզիայի նոր ուղղության հիմնադիրը: Հովհաննիսյանը պոեզիա բերեց նոր, լուսավոր զգացողություն, բանաստեղծության մտերիմ քնարականություն, հղկված նոր լեզու և ոճական մտահղացումներ: Եինչքան էլ որ մենք՝ պատանիներս,— գրում է Ավետիք Իսահակյանը այդ շրջանի մասին,— վառված էինք Արեմտահայաստանի ազատագրական տենչերով, բայց և այնպես մեր սիրտը ուներ ինտիմ, մտերիմ պահանջներ՝ սրտի խոսքեր, սիրո և երազական վշտի երգեր, մի բառով՝ լիրիկա»⁴:

Հովհաննիսյանի պոեզիան իր էությունով հին արժեքների ժխտումը չէր: Այն ստեղծվեց նախորդների գրական ավանդույթների վրա, գեղագիտական նոր պահանջների դրդմամբ և ծնունդ էր հայ մտավորականության լայն շրջաններում դեմոկրատական-ազատագրական գաղափարների տարածման:

Վ. Բրյուսովը, խոսելով XIX դարավերջի հայ պոեզիայի մասին, նշում է. «Ընդհանուր գրականության պատմության մեջ հայտնի են այնպիսի շրջաններ՝ երբ բանաստեղծության համար հանկարծ հասնում է ծաղկման ժամանակ, ինչպես կեռասենին՝ գարնան: Այսպիսի դարաշրջան ունեցավ և ռուսահայ» բանաստեղծությունը, երբ անցյալ դարի վերջին տասնամյակում հետըզհետե դուրս ելան Հովհաննիսյանը, Մատուրյանը, Թումանյանը և Իսահակյանը»⁵:

Հովհաննիսյանի լավագույն թարգմանություններից հիշատակության արժանի են Պուշկինի, Լեմոնտովի, Նեկրասովի, Յակուբովիչի, Պլեչևեևի, Նիկիտինի, Գյոթեի, Ուլանդի, Հյուգոյի, Սիրոկոմլյայի ոստեղծագործություններից կատարվածները:

⁴ Ա. Վ. Իսահակյան, Երկեր, հ. 4, Երևան, 1959, էջ 55:

⁵ Վ. Բրյուսով, Հայ բանաստեղծությունը, Վենետիկ, 1923, էջ 129:

Պուշկինի և Լերմոնտովի պոեզիան առանձնապես մոտ ու հարազատ է եղել Հովհաննիսյանին: Այդ մասին նա հայտնել է Յու. Վեսելովսկուն, երբ *վերջինս, 1902 թ. հոկտեմբերին* իր «Русское влияние в современной армянской литературе» գիրքը տպագրության պատրաստելուց առաջ հայ գրողներին ուղղում է հարցաթերթ-նամակ՝ թե ուս գրականությունն ի՞նչ ազդեցություն է ունեցել հայ գրողների վրա: Հովհաննիսյանը նույն թվականի նոյեմբերի 24-ին իր պատասխանում գրել է. «Անձամբ իմ մասին կարող եմ հայտնել, որ, շնայած առաջին բանաստեղծները, որոնք ինձ վրա ուժեղ տպավորություն են դրոժել, եղել են Բայրոնը և Գյոթեն, բայց հետագայում ես անշուշտ էրեցի Պուշկինին և Լերմոնտովին: «Եվզենի Օնեգինի» նմանությամբ, դեռևս (աղարջան ճեմարանի սան, գրել եմ մի ամբողջ պոեմ (երեք, իհարկե, չտպագրված): Լերմոնտովից ես ունեմ բազմաթիվ թարգմանություններ (ի միջի այլոց և «Մահվան հրեշտակը», բայց ես դրանք չեմ տպագրել)»⁶:

• Հովհաննիսյանը թարգմանեց ու մասսայականացրեց Պուշկինի ստեղծագործությունները, խորապես համոզված լինելով, որ մեծ բանաստեղծի երկերի թարգմանությունը կնպաստի հայ գրականության սահմանների ընդլայնմանը, հայ մշակույթի զարգացմանն ընդհանրապես: 1880 թ., ուսանելու տարիներին, նա թարգմանել է Պուշկինի «Անավարտ պատկեր»⁷ բանաստեղծությունը: Բնագրի և թարգմանության առաջին քառատողի համեմատությունից երևում է, որ Հովհաննիսյանը թարգմանության ընթացքում փոքր-ինչ շեղվել է հանգից, սակայն առանց հեռանալու տեքստից ստեղծել է համահունչ գործ:

Чья мысль восторгом угадала,
Постигла тайну красоты?
Чья кисть, о небо, означала
Сии небесные черты?»⁸

Այս ո՞ւմ խանդավառ միտքն է գուշակել,
Ըմբռնել գաղտնիքը գեղեցկության,
Ո՞ւմ արդյոք, երկի՞նք, վրձինն է դրոշմել
Այս ըսքանչելի գծեր երկնարժան:

Ապա՝

Ты, гений!.. Но любви страданья
Его сразили. Взор немой
Вперил он на свое созданье...

Այդ դու ես, հանճար... Բայց խորտակեցին
Սիրո տառապանք նորան. և անձայն
Աչքերը հառած յուր գործի վրան...

⁶ Ю. Веселовский, Русское влияние в современной армянской литературе. М., 1909, стр. 19.

⁷ Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1964, էջ 299:

⁸ А. Пушкин, Собрание сочинений, т. 2, М., 1967, стр. 26.

Այստեղ Հովհաննիսյանը ստեղծել է իր նախասիրած տասը վանկանի շափը՝ պահպանելով արտահայտչամիջոցները և ստեղծագործության ոգին:

Պուշկինի «Ո՛վ վարդ աղջիկ, գերի եմ եմ»⁹ բանաստեղծությունը նույն թվականի (1880) թարգմանությունն է: Առաջին երկու տողերում, ուսումնաստեղծի հոգեվիճակը նկարագրելիս, Հովհաննիսյանը ստեղծել է բնագրին հարազատ թարգմանություն:

О дева-роза, я в оковах,
Но не стыжусь твоих оков¹⁰.

Ո՛վ վարդ աղջիկ, գերի եմ եմ,
Բայց կապանքից չեմ ամաչում:

Հաջորդ տողերում յուրովի է վերարտադրել բնագիրը:

Так соловей в кустах лавровых,
Пернатый царь лесных певцов,

Արքա-երգիչ սոխակն այսպես
Անցնում է կյանք դափնիններում

Վերջին տողերում առկա են անբնական հանգր, սահուն հայերենը:

В неволе сладостной живет
И нежно песни ей поет
Во мраке ночи сладострастной.

Գերության մեջ, սակայն անուշ,
Եվ յուր տաղերն երգում քնքուշ
Մութ հեշտալի գիշերներին:

1883 թ. Հովհաննիսյանը թարգմանում է Պուշկինի «Վաստակ»¹¹ բանաստեղծությունը, որտեղ ուս գրողը խորհում է իր «Եվգենի Օնեգին» երկի յոթնամյա աշխատանքի ավարտի մասին:

Миг вожделенный настал: окончен мой труд многолетний.
Что ж непонятная грусть тайно тревожит меня?
Или, свои подвиг свершив, я стою, как поденщик ненужный¹².

Ժամը հասավ անձկալի ծանր գործիս կատարման:
Բայց է՞ր ծածուկ մի թախիծ խռովում է իմ հոգին:
Թէ՞ կատարած իմ վաստակ՝ ես եմ անպետք մի վարձկան:

⁹ «Տարազ», 1899, № 26, էջ 607:

¹⁰ А. Пушкин, Изд. журн., էջ 230:

¹¹ «Ա. Պուշկինին», Երևան, 1937, էջ 277:

¹² А. Пушкин, Собрание сочинений, т. 3, М., 1968, стр. 157.

Այս ստեղծագործության թարգմանությունը, անավարտ լինելով հանդերձ, հաշողված թարգմանության օրինակ է:

Այժմ, երբ Պուշկինի ստեղծագործությունները թարգմանվել ու դարձել են հայ ընթերցողների սեփականությունը¹³, երբ թարգմանական արվեստը մեզանում բավականաչափ ավանդույթներ ունի, չի կարելի երախտագիտություն ցույց տալ այն մեծ դերը, որ ունեցավ Հովհաննիսյանը Պուշկինից կատարած իր թարգմանություններով, հայ ընթերցողին հասցնելով Պուշկինի պոեզիայի առանձնահատկությունները:

Դեռևս վաղ պատանեկության տարիներին, ասվեց, Հովհաննիսյանին հմայել է Լերմոնտովի տաղանդը, իր խռովահույզ հոգեկան աշխարհով, ինքնատիպ գրամատիզմով, նա բարձր է գնահատել Լերմոնտովի պոեզիան, նրա ունեցած նշանակությունը ռուս քնարերգության պատմության համար: 1880 թ. Հովհաննիսյանը սկսել է թարգմանել Լերմոնտովի «Մահվան հրեշտակը»¹⁴ պոեմը, որն անավարտ լինելու պատճառով չի տպագրվել: 1884 թ. Հովհաննիսյանը թարգմանում է Լերմոնտովի «Ծաղկաբույս եմ գալիս մենալիճամբում վառել»¹⁵ բանաստեղծությունը, որը ոչ միայն ռուսական, այլև համաշխարհային պոեզիայի փայլուն գործերից է: Բանաստեղծության խորքում ակնհայտ է բնության ներգործությունը Լերմոնտովի վրա, և նա բնության չքնաղ տեսարանների նկարագրության հետ մեկտեղ խորհում է.

В небесах торжественно и чудно!
Спит земля в сиянье голубом...
Что же мне так больно и так трудно?
Жду ль чего? Жалею ли о чем?¹⁶

Նայում է երկինք շքեղ հրաշալի
Եվ կապուտազգեստ երկիրն է հանգչում,
Բայց ինչո՞ւ է այս վիշտը իմ սրտի
Սպասո՞ւմ եմ մի բան, թե՞ կորցրածս ողբում:

Բերված օրինակը և ամբողջ թարգմանությունը հավաստում են անհրաժեշտ քննարկական համարժեքներ ստեղծելու Հովհաննիսյանի կարողությունները: Նա այստեղ հմտորեն արտահայտել է հերոսի ներքին հուզաշխարհը և աշխատել է պահպանել հեղինակի լեզվամտածողությունը:

Ուշագրավ է Հովհաննիսյանի վերաբերմունքը Ն. Նեկրասովի նկատմամբ: Նրան գրավել են վերջինիս պոեզիայի թեմատիկան և կերտած քնարական կերպարները: Հովհաննիսյանը ներշնչվել է Նեկրասովի ստեղծագործության հայրենասիրական մոտիվներով և ինքը ևս երգել է իր ժողովրդի ցավերն ու հոգսերը: 1882 թ. Հովհաննիսյանը թարգմանում է Նեկրասովի

¹³ Հովհաննիսյանի Պուշկինից կատարած թարգմանությունները («Պոեմին», «Ձեռք չեմ փստում, իմ գարնան տարիքս և այլ գործեր») տպագրվել են «Բնար Պուշկինի» ժողովածուում (1899), ինչպես նաև «Ա. Պուշկինին» ժողովածուում (1937):

¹⁴ Գրականության և արվեստի թանգարան, Հովհաննես Հովհաննիսյանի արխիվ (այսուհետ՝ ԳԱԹ, ՀՀԱ), № 1—213:

¹⁵ Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 312:

¹⁶ М. Лермонтов, Собрание сочинений, т. I, М., 1964, стр. 127.

«նոր տարի» բանաստեղծությունը և ծրագրում այն զետեղել իր անդրանիկ ժողովածուում: Գրաքննությունն արգելում է այդ երկի տպագրությունը, սակայն Հովհաննիսյանին հաջողվում է մի շարք այլ ոտանավորների հետ մեկտեղ, այդ թարգմանությունը ևս ուղարկել Մարսել և տպագրել¹⁷: Այդ մասին թերթի խմբագրությունը ծանոթագրել է. «Այս օրեր անցան մեր ձեռք պրն. Հովհաննիսյանի անտիպ բանաստեղծություններն ևս, որոցմե մի քանին իբրև ճաշակ ավելորդ չենք համարիր հրատարակել «Արմենիայի» մեջ հետզհետե, ցույց տալու համար, թե ո՞րչափ ավելի եռանդոտ և գեղեցիկ կլինեն բանաստեղծի մտքի և սրտի արտահայտություններն, երբ կարենան ազատ ասպարեզ դուրս գալ՝ չինթարկվելով գրաքննության ճնշումներին»¹⁸.

Նեկրասովի թախծն ու կսկիծը համակել են հայ բանաստեղծին, և վերջինս թարգմանել է Նեկրասովի հատկապես նշված բանաստեղծությունը: Իր այս թարգմանությամբ Հովհաննիսյանը ստեղծել է բարձրարվեստ գործ, վարպետորեն վերարտադրելով սեփական հայրենիքի ազատության մասին իր իսկ սրտից բխող խոսքը.

Мать-отчизна! дойду до могилы
Не дождавшись свободы твоей!¹⁹

Ես, մայր-հայրենիք, կիջնեմ գերեզման,
Զրտեսած քաղցր քո ազատություն:

Բանաստեղծության վերջին քառատողը բովանդակում է Նեկրասովի մտորումները 1861 թ. գյուղացիության պայքարի խեղդելու առիթով և նրա ցասումը աշխարհի դեմ.

Чтобы ветер родного селенья
Звук единый до слуха донес,
Под которым не слышно кипенья
Человеческой крови и слез.

Քառատողում ակնհայտ են երկու բանաստեղծների գաղափարական ու գեղագիտական սկզբունքների ներքին հարազատությունը, հայրենասիրությունն ու հումանիզմը.

Կուզեի — գե՛թ այժմ հասցնեի քամին
Հայրենի գյուղից մի ձայնիկ միայն,
Որ ինձ չըբերեր նոր բոլ՛ջ ցավագին
Դառն արտասուքի, ծովացած արյան...

Հովհաննիսյանի թարգմանությունը սահուն է, արտահայտիչ, պահպանված է նաև բնագրի շափր:

¹⁷ «Արմենիա», Յ. X. 1887.

¹⁸ Նույն տեղում, 14. IX.

¹⁹ Н. Некрасов, Стихотворения, т. 1, Л., 1938, стр. 199.

Բանաստեղծի արխիվում²⁰ պահպանվում է գրաքննությանը ներկայացրած նրա ոտանավորների տետրը (1884—1886), որտեղ գետնի վրա են ինչպես ինքնուրույն, այնպես էլ թարգմանական ստեղծագործություններ: Տետրի առաջին էջի, 1884 թ. նոյեմբերի 24-ին կատարված թարգմանությունը սկսվում է «Անկենդան հովիտ ձյունով ըսքողված» տողով: Գրաքննության արգելքներից խուսափելու նպատակով Հովհաննիսյանը թարգմանվելիք ստեղծագործության հեղինակի ազգանվան փոխարեն դրել է նրա ծածկանունը՝ «Պ. Ե. (Թարգմանություն)»: Այնուհանդերձ, արգելվել է այդ բանաստեղծությունը: Դա ռուս հեղափոխական պոետ Պյոտր Յակուբովիչի (1860—1911)²¹ «Զյան տակ»²² խորագրերը կրող բանաստեղծությունն է, որը հրատարակվել է մի քանի անգամ: Յակուբովիչի երկերը մեծ ժողովրդականություն էին վայելում և այդ իմաստով չէին կարող չգրավել Հովհաննիսյանի ուշադրությունը: Հայ բանաստեղծը լավ է ըմբռնել այդ նշանավոր ստեղծագործության ազատասիրական ոգին, ընդվզումը բռնության դեմ:

Равнина мертвая под снежной пеленой...
Кругом тоска, зловещая тоска!²³

Անկենդան հովիտ ձյունով ըսքողված
Եվ շուրջը թախիծ, սև չարագուշակ...

Բնագրի «равнина» բառը Հովհաննիսյանը թարգմանել է «հովիտ», որը ճիշտ է, քանի որ «равнина»-ն բնորոշ է Ռուսաստանի պայմաններին, իսկ «հովիտը» Հայաստանի բնաշխարհին: Այսպիսով, թարգմանվող բառը համահունչն է բնագրին: Հովհաննիսյանը Յակուբովիչին ներկայացնելուց բացի, ինչ-որ չափով վեր է հանում նաև իր խոհերն ու հայրենիքի վիշտը:

Родимая! Тебя ли вижу я
Поникшую прекрасной головой,

Երկիր հարազատ, այս քե՛զ եմ տեսնում,
Գեղեցիկ գլուխդ այդպես խոնարհած,

Ամբողջ թարգմանության մեջ պահպանվել են ստեղծագործության ոգին և բովանդակությունը:

²⁰ ԳԱՔ, ՀՀԱ, № 1—16:

²¹ 1887 թ. Յակուբովիչը հալածվում և արտաքսվում է Ռուսաստանից, 1895 թ., հայրենիք վերադառնալով, աշխատակցում է Միխայլովսկու խմբագրությանը հրատարակվող «Русское богатство» ամսագրին: Նա հանդես է եկել նաև ծածկանուններով, արձակում՝ Լ. Մելչին, Պ. Գրինիչ, պոեզիայում՝ Պ. Ցա.: Յակուբովիչի մահվան կապակցությամբ «Равне утро»-ն գրել է. «Պ. Ցա.— Այս երկու տառը գիտեին և սիրում էին մինչև իսկ նրանք, որոնք նույնիսկ չէին իմանում, որ այդ բանաստեղծի ազգանունը անկարելի էր արտասանել մամուլում, ինչպես մի ժամանակ անկարելի էր արտասանել նաև Չերնիշևսկու անունը: (Մահախոսականի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հորիզոն», 24. III. 1911):

²² Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 143:

²³ П. Якубович, Стихотворения, СПб., 1898, стр. 149.

Հովհաննիսյանը համակրանքով է վերաբերվել նաև ռուս քնարերգու Ա. Պլեշչեևի մարտաշունչ ստեղծագործությանը: Վերջինս լինելով ռուսական քաղաքական քնարերգության հիմնադիրներից մեկը, մեծ ժողովրդայնություն էր վայելում Ռուսաստանի հասարակայնության առաջավոր շրջաններում: Հովհաննիսյանի թարգմանությամբ, 1893 թ. տպագրվել է Պլեշչեևի «Հառա՛ջ» բանաստեղծությունը²⁴, որը ռուս ժողովրդին ուղղված պայքարի կոչ է:

Вперед! без страха и сомненья,
На подвиг доблестный, друзья!
Зарю святого искупленья
Уж в небесах завидел я!²⁵

Երկի համահունչ, հոգեհարազատ թարգմանությունը տեսնում ենք առաջին քառատողի օրինակով.

Հառա՛ջ աներկյուղ, առանց վարանման,
Եղբա՛յրք, դեպի գործ դիմենք սխրալի.
Երկնքումն արդեն մեր սուրբ փրկության
Այս ալզը տեսա վառված լուսալի:

Հաշորդ քառատողում արտահայտված է ազատությունը համատեղ պայքարով ձեռք բերելու ձգտումը.

Смелей! Дадим друг другу руки
И вместе двинемся вперед.
И пусть под знаменем науки
Союз наш крепнет и растет.

Ձեռք ձեռքի տված հառա՛ջ միասին
Ընթանանք, եղբա՛յր, վստահ ու անահ,
Եվ ապավինած գիտության դրոշին
Թող մեր միությունն աճի, ամրանա:

Թարգմանության մեջ հայերեն են հնչում հեղափոխական կոչը, հեղափոխությունը հաղթական ավարտի հասցնելու սեփական ուժերի նկատմամբ համոզմունքը: Հովհաննիսյանն այստեղ արտահայտել է ռուս բանաստեղծի մտորումները՝ հայ ընթերցողին տողերելով մարդու և հայրենիքի նկատմամբ խոր հավատով:

Եվրոպական գրականությունից Հովհաննիսյանի կատարած լավագույն թարգմանություններից հատկապես ուշագրավ է լեհ բանաստեղծ Վլադիսլավ Սիրովոմլյայի (Լյուդվիգ Կոնգրատովիչ) «Անգրագետ» ստեղծագործությունը, որտեղ արտացոլված է լեհաստանում ճորտատիրական ռեժիմից հետո

²⁴ «Արձագանք», 1893, № 129.

²⁵ А. Плещеев, Полное собрание стихотворений, М.—Л., 1964, стр. 82—83.

ստեղծված ժանր կացութիւնը: Սիրողովայի նախասիրութիւնը կենցաղային կամ պատմական թեմաներով ստեղծագործութիւններն են: Հովհաննիսյանը թարգմանութեան մեջ²⁶, պահպանելով բնագրի գաղափարն ու գեղարվեստական հնարանքները, բանաստեղծական մտածողութեամբ կարողացել է ոտանավորն այնպես «հայացնել», որ ընթերցողին թվում է, թե իր առջև կանգնած է ոչ թե լեհ, այլ հայ գեղջուկը՝ իր ողբերգական ճակատագրով:

Ահա գեղջուկ մատաղ աղջիկն հունձ է անում եռանդով-
նորան հրեշտակն երկնքիցը ժպտում է վառ աչերով...
Երևի թե կարեկցո՞ւմ է նա հնձվորին... Եվ նորա՞ն
Արտուտիկը կամի սփռփել յուր երգովը քաղցրաձայն...

Այստեղ ղգացվում է ժողովրդական արտահայտութիւններին: հարազատ մնալու Հովհաննիսյանի ձգտումը, միաժամանակ պահպանելով Սիրողովայի հատուկ պարզ ոճը, խոսակցական լեզուն:

Շուտո՞վ, շուտո՞վ գրիչ տվե՛ք, սովորցըրե՛ք գործ ածել,
Կամի՞մ գրել ազգիս համար, նորա համար աշխատել:
Եվ ես նորան կըպաշտպանեմ շարշարանքից, հիմարից,
Կարտագրեմ Ավետարանն ես բոլորը սկզբից...

«Անգրագետ» բանաստեղծութեան թարգմանութեան հաջողութիւնը բացատրվում է Սիրողովայի և Հովհաննիսյանի հոգեհարազատութեամբ:

Զգալի թիվ են կազմում Հովհաննիսյանի ֆրանսերենից կատարած թարգմանութիւնները: Նա քաջատեղյակ էր ֆրանսիական պոեզիային և առաջիններից մեկն էր, որ ձեռնարկեց նրա լավագույն նմուշների հայերեն թարգմանութիւնը: Դեռևս պատանեկութեան տարիներին Հովհաննիսյանը հրապուրվել է Վիկտոր Հյուգոյի ստեղծագործութեամբ: Հյուգոյի «Մի կնոջ», «Որովհետև համբուրում եմ» և շատ այլ բանաստեղծութիւնների թարգմանութիւններից բացի (անտիպ), ուշագրավ է 1883 թ. «Ուժգին հողմերը արձակ դաշտերում» բանաստեղծութեան Հովհաննիսյանի թարգմանութիւնը²⁷: Անավարտ այդ թարգմանութեան մեջ ակնհայտ է Հյուգոյի երկի Հովհաննիսյանի հոգեբանական ընկալումը: Հայերեն է հնչում բանաստեղծութեան սկզբի տողերի հեղինակի դիմումը բնությանը:

Ուժգին հողմերը արձակ դաշտերում
Կանաչ ծառերի զարդերն են սփռում,
Գոռում են, սուլում դառնաշունչ վայրագ...

Ապա՝

Պատանի՛, դու՝ որ գիտես վիշտն մարդկան,
Պատանի՛, սիրտըդ բա՛ց կարեկցաբար
Զգալու անել կարիք գառնութեան...

²⁶ «Աղբյուր», 1886, № 7, էջ 249—250:

²⁷ Հովհաննես Հովհաննիսյան, Երկերի ժողովածու, Երևան, 1937:

1912 թ. գարնանը Հովհաննիսյանը ուսումնական հանձնաժողովի նախագահի պաշտոնով հրավիրվում է Բաքու: 1918 թ. Ստեփան Շահումյանի հանձնարարականով նա նշանակվում է Բաքվի Կոմունայի լուսավորության բաժնի վարիչ: Բանաստեղծն արտասովոր ոգևորությամբ է ընդունում Բաքվի Կոմունայի գործունեությունը և նախաձեռնում է էժեն Պոտիեի «Խնտերնացիոնալի» հայերեն թարգմանությունը: Այդ թարգմանությունը վկայում է գրողի հեղափոխական ոգևորությունը Բաքվի Կոմունայի փոթորկալից օրերին²⁸: Նա մտադիր է եղել «Խնտերնացիոնալը» թարգմանել բնագրից, սակայն չի կարողացել ձեռք բերել ֆրանսերեն բնագիրը և թարգմանել է ռուսերենից՝ թողնելով այն անավարտ²⁹:

Հովհաննիսյանը լավ ծանոթ էր գերմաներեն լեզվին ու գրականությանը: Նրա սիրած բանաստեղծներից էր Ալուզվիգ Ուլանդը: Ըստ երևույթին, Հովհաննիսյանին գրավել է պատմական թեմաները և ժողովրդական ավանդությունները բանաստեղծական հմայիչ ձևերով մշակելու Ուլանդի կարողությունը: Ուլտմդի «Երգչի անեծքը»³⁰ Հովհաննիսյանը թարգմանել է 1889 թ.: Գրականագետ Ն. Մուրադյանը իրավացիորեն նկատել է. «Թարգմանական արվեստի մի գոհար է Ուլանդի «Երգչի անեծքը»: Եթե Հովհաննիսյանը ոչինչ թարգմանած չլիներ, միայն սա բավական էր նրա հազվագյուտ կուլտուրայի մասին գաղափար կազմելու համար»³¹: Ավելացնենք, որ այդպիսի թարգմանության համար հարկավոր էր նաև բանաստեղծական տաղանդ: Ահա մի հատված այդ թարգմանությունից.

Դարեր առաջ կար բարձրաբերձ պարիսպներով մի դղյակ —
Հոյակապ էր, փառքն հասել էր մինչ օվկիան կապուտակ.
Շուրջը փոված ծաղկապսակ անուշաբույր պարտեզներ,
Թարմ, զովաշունչ շատրվաններ ցայտում էին վառ շիթեր:

Եվ բազմահաղթ այնտեղ նստող գոռոզ արքան հողաշատ
Բազմած վեր գահի վերա մռայլ դեմքով ու գունատ.
Ամեն խորհուրդն արհավիրք էր, կատաղություն աչքերում,
Նորա ամեն խոսքը—կորուստ, արյուն էր նա միշտ գրում:

Թարգմանության մեջ պահպանված են բանաստեղծության կենդանի տգին ու գեղարվեստական կորովը, հոգեբանական նրբերանգները: Թարգմանությունն աչքի է ընկնում բանաստեղծական դեղեցկությամբ, անբռնա-

²⁸ «Խնտերնացիոնալի» առաջին հայ թարգմանիչը մեզանում Հակոբ Հակոբյանն է (Երեբունյակի թարգմանությունը տե՛ս «Կայծ», Թիֆլիս, 1908, № 27, Հակոբյանի հետևյալ ծանոթությամբ. «Երգը, որ թարգմանած է ռուսերենից, իր եղանակով, չի ենթարկվում հայկական տաղաչափության»): Հետագայում (1925 թ.) «Խնտերնացիոնալի» ամբողջական թարգմանությունը բնագրից կատարել է Ե. Չարենցը, պահպանելով է. Պոտիեի բանաստեղծության տաղաչափությունը, որն այժմ երգվում է:

²⁹ Հ ո վ հ ա ն ն ե ս Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 199—200:

³⁰ «Շանդես գրականական և պատմական», Մ., 1869, № 1:

³¹ Ն. Մ ու Ր ա դ յ ա ն, Հովհաննես Հովհաննիսյանի արվեստը, Երևան, 1964, էջ 142:

գրոս վիպերգական ոճով: Պահպանված է նաև գերմաներենի ոճի խրոխտությունը:

Հովհաննիսյանը մեծ համակրանքով էր լցված Հայնեի, Շիլլերի պոեզիայի նկատմամբ: Շիլլերը համաշխարհային այն դասականներից էր, որոնք իրենց առաջադիմական գաղափարներով, ումանտիկ-ադատասիրական ձեգ-տումներով մեծ ազդեցություն գործեցին հայ գրողների վրա: Դրանով պետք է բացատրել, որ Շիլլերը հայ իրականության մեջ ամենից շատ թարգմանվող հեղինակներից էր: Շիլլերի բուն ցասումը բնականության դեմ հարադատ է եղել նաև Հովհաննիսյանին: Այդ է պատճառը, որ գերմանացի բանաստեղծի ստեղծագործություններից նա ընտրել և մեծ վարպետությամբ թարգմանել է «Երաշխիք», «Պոլիկրատեսի մատանին» բալլադները և «Տենչանք» բանաստեղծությունը³²: Այս թարգմանությունները որքան էլ դժվար ու աշխատատար են, այնուամենայնիվ, վկայում են Հովհաննիսյան թարգմանչի տաղանդը, բնագրի ողջ հմայքը հայ ընթերցողին հաղորդելու նրա անուրանալի կարողությունը:

Հովհաննիսյանի արխիվում, չափածո երկերի թարգմանություններից բացի, պահվում են նաև արձակ գործերի թարգմանական փորձեր³³, որոնք ուշագրավ են ո՛չ միայն բանաստեղծի հետաքրքրությունների շրջանակները պարզելու առումով, այլև հրպես նրա մեկ այլ ներգրում հայ թարգմանական գրականության մեջ:

Համաշխարհային դրամատուրգիայից Հովհաննիսյանին գրավել են հատկապես Շեքսպիրի պիեսները: Նա փորձել է թարգմանել «Ռոմեո և Ջուլիետը» և «Մակբեթը»³⁴: Թարգմանության պահպանված հատվածները վկայում են Շեքսպիրի ստեղծագործությունների գաղափարական կողմն ընկալելու հաջ բանաստեղծի կարողությունը: Իսկապես, Հովհաննիսյանը խորն ու բազմակողմանի է ուսումնասիրել Շեքսպիրի արվեստը: Հետաքրքիր են մեծ դրամատուրգի արվեստի մասին Հովհաննիսյանի դիտողություններն ու այն գնահատականները, որ նա տվել է Շեքսպիրի թարգմանիչներին: Օրինակ, Հովհաննիսյանը բարձր է գնահատել «Համլետի» մասհայտնական թարգմանությունը, ընդգծելով նրա ճոխ, բանաստեղծական լեզուն:

Թարգմանական արվեստի հարցերը առհասարակ եղել են Հովհաննիսյանի ուշադրության կենտրոնում: Խոսելով Լ. Տոլստոյի «Ինչո՞վ են ապրում մարդիկ» պատմվածքի փոխադրության մասին, նա նշել է, որ այն թարգմանելու դեպքում դժվար կլիներ հայ ընթերցողին հասցնել ռուսական գյուղական կյանքի առանձնահատկությունները, մինչդեռ փոխադրությունը, հնարավորություն ստեղծելով «հայացնել» միջավայրը, լիովին կարող է մատչելի դարձնել երկի գաղափարը³⁵: Հովհաննիսյանն իր բազմաթիվ հոգևածներում, գրախոսություններում առաջ է քաշել նոր գեղագիտական հարցեր, թարգմանություններն անթերի վերարտադրելու խնդիրներ: Անդրադառնալով Մոլիերի «Պարոն դը Պուրսոնյակը» զվարճալի պիեսը Թիֆլիսում բեմադրելու

³² «Արարատ», 1895, № 5, 6, 8:

³³ 1901 թ. վերջերին աշխատակցելով «Արձագանքին» Հովհաննիսյանն այդ պարբերականում հրատարակել է ֆրանսիական գրողներից կատարած իր արձակ թարգմանությունները:

³⁴ ԳԱԹ, ՀՀԱ, № 1, 220, 221:

³⁵ «Նոր-Դար», 30. III. 1885:

հարցին, նա դժգոհում է պիեսի անհաջող թարգմանությունից (թարգմանիչներ՝ Թուրյան և Նրեմյան), ինչպես նաև՝ չգոհացնող բեմադրությունից. «Ո՛վ գեթ մի անգամ կարդացել է «M. de Poursognac»-ի բնագիրը, չէ կարող չխոստովանել, որ պիեսի իսկական աղն ու համը չկա բնավ այդ թարգմանության մեջ»³⁶։ Մի շարք առիթներով Հովհաննիսյանը խրախուսել է հաջող թարգմանությունները։ Օրինակ, 1896 թ., Մատուրյանի և Ցու. Վեսելովսկու նախաձեռնությամբ, Գ. Սունդուկյանի «Պեպոյի» ուսերեն թարգմանության³⁷ կամ Լ. Տոլստոյի «Մանչուկն ու կուտիկը» պատմվածքի՝ Պ. Պոռչյանի թարգմանության մասին արտահայտվելիս, նա հիացմունքով բացականչել է. «Այ թարգմանություն, այդ տեսակների համար են ասել հայացրած թարգմանություն։ Ամեն լեզու էր ինքնուրույնությունը, իր իդիոմիզմն ունի. թարգմանի «դողադութությունից» է կախված օտար լեզվի ինքնուրույնությունները մայրենի լեզվի ինքնուրույնություններով փոխարինելու. Պոռչյանն այդպես է արել»³⁸։

1912 թ., տպագրելու ակնկալություն չունենալով, Հովհաննիսյանը թարգմանել է Ս. Ցուլկևիչի «Թագավոր»³⁹ պիեսը և բեմադրության հանձնարարելու նպատակով, հավանաբար, ուղարկել Նովկասի Հայոց հրատարակչական ընկերությանը։ Պիեսի թարգմանությանը նա կցել է մի գրություն, որի մեջ խոսում է թարգմանական արվեստի մի քանի հարցերի մասին։ Ընկերության վարչությունը, առանց թարգմանի գիտության, հրատարակել է այն, իսկ հիշյալ գրությունը կցել որպես առաջաբան, ուր հետաքրքիր է բանաստեղծի արած մի դիտողությունը. «Քանի գնում, — գրում է նա, — ավելի ու ավելի համոզվում եմ, որ մեր գրական լեզուն նոր նոր է սկսում մշակվել... Այս բանը մանավանդ շոշափելի է դառնում այն ժամանակ, երբ մենք փորձում ենք մի զարգացած գրականություն ունեցող ազգի հեղինակի մտքերն ու զգացմունքները արտահայտել հայերեն»⁴⁰։ Ապա նա խոսում է թարգմանական որոշ սկզբունքների մասին. «... ամեն լավ թարգմանություն ինքն իրեն պիտի չմատնե, եղևան չհանե, ըստ կարելույն, յուր թարգմանություն լինելը. հետո՝ լեզվի վերաբերությամբ էլ թարգմանիչը հեղինակի ստեղծագործական մտազրությանց թարգմանը պիտի հանդիսանա, ամեն գործող անձի բերանը իրեն հատուկ ու համապատասխան լեզու դնելով»⁴¹։ Այստեղ արտահայտվել է, մի կողմից գրական հայերենի բարելավման անհրաժեշտությունը, մյուս կողմից, հավատն այն մասին, որ յուրաքանչյուր ժողովրդի մշակույթն ու գրականությունը կարող են զարգանալ միայն այն դեպքում, երբ այդ ժողովուրդը հաղորդակից է համաշխարհային գրականությանն ու մշակույթին։

Հովհաննիսյանը ձգտել է թարգմանություններում (թարգմանել է քառասունից ավելի հեղինակների) հավատարիմ մնալ թարգմանվելիք յուրաքանչյուր երկի ոճին, պահպանելով բանաստեղծության տարբերիչ գույներն ու երանգները։

36 Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Նրվերի ժողովածու, հ. 3, 1965, էջ 249—250։

37 Նույն տեղում, էջ 304։

38 ԳԱԹ, ՀՀԱ, լրացուցիչ, № 154 (Ավետիք Տեր-Պողոսյանի հուշերը)։

39 Նույն տեղում։

40 Ս. Ց ու լ կ է ի չ, Թագավոր, Թիֆլիս, 1912, էջ 1։

41 Նույն տեղում, էջ 3—4։

Հովհաննես Հովհաննիսյանի գրական ժառանգության առումնասիրությանը, նաև նրա թարգմանությունների գնահատման շրջանակներում, մեծապես կարող է օգնել և՛ ժամանակակից թարգմանական գրականության առաջընթացին, և՛ ժողովուրդների մշակույթի փոխազդեցությունների գիտական վերլուծությանը:

ИОАННЕС ИОАННИСЯН КАК ПЕРЕВОДЧИК

МАРГАРИТА МЕЛИКЯН

Резюме

И. Иоаннисян начал заниматься художественными переводами еще в годы учебы в Лазаревской семинарии. Он в совершенстве владел русским языком. Его перу принадлежат блестящие художественные переводы из русской поэзии, а также из произведений европейских поэтов.

В отличие от многих других переводчиков, большую часть своих переводов Иоаннисян сделал с оригинала, обогатив тем самым армянскую художественную переводческую поэзию.